ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

16 սեպտեմբերի 2025թ. **N 54-Ն**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 138-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի «Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու կարգը, հայտի ձևը, անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների ըստ ընտրական տեղամասերի բաշխման կարգը սահմանելու մասին» N 138-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում).

1) 1-ին կետի 1-ին ենթակետից հանել «կուսակցության, կուսակցությունների դաշինքի» բառերը,

2) 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

3) Որոշման N 1 հավելվածով սահմանված կարգի.

ա. վերնագրից հանել «Կուսակցության, կուսակցությունների դաշինքի» բառերը,

բ. կարգի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով,

«3) «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերը՝ յուրաքանչյուրը երկու անդամ և համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ երեք անդամ՝ հանրաքվեների ժամանակ:»,

գ. 3-րդ կետից հանել «Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները)» բառերը, իսկ «իրականացնում են» բառերը փոխարինել «իրականացվում է»բառերով,

դ. 4-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով» բառերը փոխարինել ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» և «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքներով և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով, իսկ երկրորդ նախադասությունը հանել,

ե. 5-րդ և 6-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական ընտրական

հանձնաժողովի տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հայտերի առցանց ներկայացման համակարգի միջոցով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հայտերի առցանց ներկայացման համակարգից ներբեռնված հայտն ստորագրում է կուսակցության ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ կուսակցության ղեկավարի տեղակալը (քարտուղարը), կուսակցությունների դաշինքի դեպքում՝ խմբակցության ղեկավարը, նրա բացակայության դեպքում՝ խմբակցության քարտուղարը:

6. Եթե կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) նույն ընտրական տեղամասում նշանակում է հանձնաժողովի երկու անդամ և այդ անդամներից մեկը պետք է զբաղեցնի հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի պաշտոնը, այդ դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հայտերի առցանց ներկայացման համակարգում սույն որոշման 4-րդ հավելվածով սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխման արդյունքով «Նախագահ» և «Քարտուղար» նշումներին համապատասխան լրացվում են տվյալ տեղամասային ընտրական հանձնաժողովում նախագահի և քարտուղարի պաշտոնները զբաղեցնողի տվյալները:

Հանրաքվեների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հայտերը ներկայացվում են սույն կարգով սահմանված կարգով՝ «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում:»:

զ. 9-րդ կետից հանել «ազգանունները, անունները և» բառերը, իսկ ««Ընտրություններ» ավտոմատացված համակարգի տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորման համար նախատեսված դաշտում» բառերը փոխարինել «տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հայտերի առցանց ներկայացման համակարգ» բառերով,

է. 11-րդ կետում «տպագրվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմը» բառերը փոխարինել «ձևավորվում է տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերը հաստատելու և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակելու մասին որոշման նախագիծը» բառերով:

4) Որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

5) Որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

6) Որոշման N 4 հավելվածով սահմանված կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7. Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումն «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերի միջև իրականացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում, այդ պահին ծրագիրը գործարկելու և արդյունքը ստանալու միջոցով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումն «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերի միջև ըստ ընտրական տեղամասերի կատարվում է համակարգչային եղանակով «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով՝ ընտրական տեղամասերի կազմավորումից հետո, բայց ոչ ուշ, քան տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը ներկայացնելու համար «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետի սկիզբը՝ ապահովելով հավասարության սկզբունքը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025թ. սեպտեմբերի 16-ի N 54-Ն որոշման

«Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2016թ. նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ՀԱՅՏ

_____

(կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը, հանրաքվեի ժամանակ՝ քարոզչության կողմի անվանումը)

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի համաձայն
_____ ընտրություններին
(նշվում է ընտրության անվանումը)

տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ են նշանակվել.

ԸԸՀ N	ՏԸՀ N	Համայնք	Նշանակվող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի ազգանուն, անուն, հայրանուն	Որակավորման վկայականի համար	Հեռախոսահամար	Պաշտոն

Հայտում նշված քաղաքացիներն ունեն տեղամասային ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու իրավունք, նրանց վրա չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածով ընտրական հանձնաժողովի անդամ նշանակվելու համար նախատեսված սահմանափակումները:

Կուսակցության ղեկավար (տեղակալ)
Կուսակցությունների դաշինքի դեպքում՝
խմբակցության ղեկավար (տեղակալ) _____ _____
(ազգանուն, անուն) (ստորագրություն)

(օր, ամիս տարեթիվ)»:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025թ. սեպտեմբերի 16-ի N 54-Ն որոշման

«Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2016թ. նոյեմբերի 22-ի N 138-Ն որոշման

ԹԻՎ _____ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ՀԱՅՏ

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի համաձայն
_____ ընտրություններին
(նշվում է ընտրության անվանումը)

տեղամասային ընտրական հանձնաժողովում նշանակելու համար ներկայացնում եմ.

ՏԸՀ N	Համայնք	Նշանակվող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի ազգանուն, անուն, հայրանուն	Որակավորման վկայականի համար	Հեռախոսահամար

Հայտում նշված քաղաքացիներն ունեն տեղամասային ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու իրավունք, նրանց վրա չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածով ընտրական հանձնաժողովի անդամ նշանակվելու համար նախատեսված սահմանափակումները:

Թիվ _____ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամ _____ _____
(ազգանուն, անուն) (ստորագրություն)

(օր, ամիս տարեթիվ)»: